Գնումների համակարգի միտումների ամփոփ վերլուծություն

Համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքում ներկայացված տվյալների[1]՝ 2020թ. 10 ամիսների կտրվածքով կնքվել են 13677 պայմանագրեր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 242.6 մլրդ դրամի պարտավորություն: 2019թ. 10 ամիսների կտրվածքով կնքվել են 14450 պայմանագրեր՝ գեներացնելով շուրջ 215.7 մլրդ դրամի պարտավորություններ: Այսպիսով, 2020թ. 10 ամիսների կտրվածքով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է կնքված պայմանագրերի քանակի մոտ 5%-ի նվազում, իսկ պայմանագրային արժեքի առումով՝ առնվազն 12%-ի աճ:

Պատվիրատուների կողմից կնքված պայմանագրերի ծավալի և կառուցվածքի վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կնքված պայմանագրերի ծավալը և կառուցվածքը, 2019 և 2020թթ. 10 ամիսներ

	2019թ. 10 ամիսներ		2020թ. 10 ամիսներ	
Գնման ընթացակարգը	**Պայմանագրերի քանակը, հատ**	**Պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ**	**Պայմանագրերի քանակը, հատ**	**Պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ**
Բաց մրցույթ	257	14,5	298	69
Հրատապ բաց մրցույթ	162	35,1	154	27,7
Գնանշման հարցում	6450	26,8	6764	26,7
Մեկ անձ	**5320**	**108**	**5142**	**109,5**
Հրատապ մեկ անձ	**219**	**13,6**	**608**	**7,9**
Գնում չհանդիսացող ծախս	956	1,6	711	1,8
Էլեկտրոնային աճուրդ	1086	16,1	-	-
Ընդամենը	**14450**	**215,7**	**13677**	**242,6**

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակի տվյալներից, **2020թ. 10 ամիսների կտրվածքով ոչ մրցակցային եղանակով** (մեկ անձ և հրատապ

[1] Անվտանգության նկատառումներից ելնելով՝ գնումների հաշվետվողականության կայքի պայմանագրեր բաժինը որոշ ժամանակով փակված է հանրության համար:

մեկ անձ) կնքվել է առնվազն **5750** պայմանագիր, ինչի արդյունքում գեներացվել է շուրջ **117,4 մլրդ դրամի** պարտավորություն: Իսկ 2019թ. 10 ամիսների կտրվածքով կնքվել է 5539 այդպիսի պայմանագիր՝ արդյունքում գեներացնելով շուրջ 121,6 մլրդ դրամի պարտավորություն: Համաձայն ներկայացված տվյալների, 2020թ. 10 ամիսների կտրվածքով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ մրցակցային գնումները քանակական առումով աճել են մոտ 4%-ով, իսկ ահա արժեքային առումով նվազել են շուրջ 3%-ով:

Սակայն այստեղ պետք է հաշվի առնել, որ 2020թ. ընթացքում COVID-19 համավարակի կանխմանն ու հաղթահարմանն հետ կապված գնումների վերաբերյալ տվյալները (որոնք իրականացվել են հիմնականում ոչ մրցակցային ընթացակարգերով) ոչ ամբողջությամբ են հրապարակվել: Մասնավորապես, պետգնումների հաշվետվողականության www.armeps.am/ppcm կայքում բացակայում են առողջապահության նախարարության կողմից իրականացված վերոնշյալ գնումների վերաբերյալ տվյալները, ինչից հետևում է, որ 2020թ. 10 ամիսների կտրվածքով իրականացված ոչ մրցակցային գնումները արժեքային առումով ավելի խոշոր գումար են կազմել և հավանաբար գերազանցել են նախորդ ժամանակաշրջանի նմանատիպ գնումները:

Ոչ մրցակցային գնումների քանակային և արժեքային տվյալները եռամսյակային կտրվածքով ներկայացված են Գծապատկեր 1-ում և 2-ում:

Գծապատկեր 1. Ոչ մրցակցային գնումներն ըստ քանակի, 2018-2020թթ. եռամսյակային կտրվածքով



Գծապատկեր 2. Ոչ մրցակցային գնումներն ըստ արժեքի, 2018-2020թթ. եռամսյակային կտրվածքով



Առավել հետաքրքրական է գնման ընթացակարգերի և հատկապես ոչ մրցակցային ձևերի կառուցվածքային ուսումնասիրությունը, որի արդյունքները ներկայացված են Գծապատկեր 3-ում և 4-ում:

Գծապատկեր 3. Կնքված պայմանագրերի քանակական կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019 և 2020 թթ. 10 ամիսներ

Քանակական կառուցվածքը, 2019թ. 10 ամիսներ	Քանակական կառուցվածքը, 2020թ. 10 ամիսներ
	

Գծապատկեր 4. Կնքված պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019 և 2020 թթ. 10 ամիսներ

Արժեքային կառուցվածքը, 2019թ. 10 ամիսներ	Արժեքային կառուցվածքը, 2020թ. 10 ամիսներ
	

Համաձայն վերոնշյալ գծապատկերների տվյալների, **2020թ. 10 ամիսների կտրվածքով ոչ մրցակցային գնումների** մասնաբաժինը ընդհանուր գնումներում **քանակական առումով** կազմել է շուրջ **42%**, իսկ **արժեքային առումով՝** շուրջ **48%**:

2019թ. 10 ամիսների կտրվածքով այս ցուցանիշը քանակական առումով կազմել է շուրջ 39%, իսկ արժեքային առումով՝ շուրջ 56%:

Այսպիսով, չնայած նախորդ տարվա համեմատ 2020թ. ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում քանակապես ավելացել է մոտ 3%-ով, սակայն արժեքային առումով այն նվազել է մոտ 8%-ով: Սակայն ինչպես արդեն նշվել էր, պետգնումների կայքից գեներացված տվյալներում բացակայում են 2020թ. առողջապահության նախարարության կողմից իրականացված COVID-19 համավարակի կանխմանն ու հաղթահարմանն հետ կապված ոչ մրցակցային գնումների վերաբերյալ տվյալները, ինչը ենթադրում է, որ 2020թ. 10 ամիսների կտրվածքով ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում արժեքային առումով եղել է շատ ավելի մեծ, քան ներկայացված է վերոնշյալ գծապատկերում:

Ոչ մրցակցային ընթացակարգերի վերլուծության շրջանակում հետաքրքրական է նաև դրանք առավել հաճախ կիրառող պատվիրատուների ուսումնասիրությունը (Աղյուսակ 2 և 3):

Աղյուսակ 2. Ոչ մրցակցային հիմքով հիմնական պատվիրատուները, 2020թ. 10 ամիսներ

	Պատվիրատու	Ոչ մրցակց. հիմքով պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ	Ոչ մրցակց. հիմքով պայմանագրերի քանակը	Մասնաբաժինը (%) պատվիրատուի ընդհանուր գնումներում (մլրդ դրամ)
1	Առողջապահության նախարարություն	82,3	996	95% (86.5)
2	Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ ՊՀ	7,2	22	99% (7.2)
3	ՀԱԷԿ	4,6	29	57% (8.1)
4	Ոստիկանություն	4,3	111	36% (11.8)
5	Պաշտպանության նախարարություն	4,2	60	16% (26)
6	Էկոնոմիկայի նախարարություն	3,9	491	99% (4)
7	Վարչապետի աշխատակազմ	2,2	212	76% (2.9)
8	ՊԵԿ	1,7	83	14% (11.8)
9	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	1,6	73	5% (30)
10	Կրթության և գիտության նախարարություն	1,2	111	43% (2.8)
	Ընդհանուր ոչ մրցակցային գնումներ	**117,5**	**5750**	

Աղյուսակ 3. Ոչ մրցակցային հիմքով հիմնական պատվիրատուները, 2019թ. 10 ամիսներ

	Պատվիրատու	Ոչ մրցակց. հիմքով պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ	Ոչ մրցակց. հիմքով պայմանագրերի քանակը	Մասնաբաժինը (%) պատվիրատուի ընդհանուր գնումներում (մլրդ դրամ)
1	Առողջապահության նախարարություն	72	1163	85% (84.8)
2	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	9,3	83	52% (18)

3	Հանրային հեռուստառադիոընկեր. խորհրդի աշխատակազմ ՊՀ	7,2	19	99% (7.2)
4	Պաշտպանության նախարարություն	6,3	92	19% (33)
5	Ոստիկանություն	5,2	123	44% (11.7)
6	ԷԵԲՊՆ ջրային կոմիտե	2,3	36	79% (2.9)
7	ՊԵԿ	2,1	52	19% (11)
8	Կրթության և գիտության նախարարություն	1,1	45	65% (1.7)
9	Արդարադատության նախարարություն	0,44	46	57% (0.77)
10	Դատական դեպարտամենտ	0,4	61	36% (1.1)
	Ընդհանուր ոչ մրցակցային գնումներ	**121,7**	**5539**	

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակներում բերված տվյալներից, ոչ մրցակցային ընթացակարգերը առավել հաճախ կիրառող պատվիրատուների ցանկը որոշակի փոփոխությունների է ենթարկվել, մասնավորապես նախորդ ժամանակաշրջանի համեմատ պատվիրատուների այս տասնյակում ավելացել են ՀԱԷԿ-ը, Էկոնոմիկայի նախարարությունը և Վարչապետի աշխատակազմը: Բացառությամբ Առողջապահության նախարարության, նախկինում այս տասնյակում ընդգրկված պատվիրատուների մոտ արժեքային առումով հիմնականում նկատվել է ոչ մրցակցային գնումների նվազում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետգնումների օրենսդրության մեջ հստակորեն սահմանվում են ոչ մրցակցային գնումների իրականացման պայմանները, այդ թվում հրատապության հիմքի առկայության դեպքում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ դեպքերում վերոնշյալ դրույթները շահարկվում են պատվիրատուների կողմից այն առումով, որ հրատապության հիմքով ոչ մրցակցային ձևի կիրառման պատճառաբանությունները երբեմն այնքան էլ համոզիչ չեն լինում և ավելի շատ վկայում են պատվիրատուների որոշակի կարողությունների պակասի և արդյունավետ պլանավորման և գնումների իրականացման հետ կապված խնդիրների մասին:

Հաշվի առնելով վերոնշյալը, մոնիտորինգի շրջանակներում ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից փորձ է կատարվել տարանջատել այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված և այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները:

Որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված գնումներ են դիտարկվել հետևյալ ուղղություններով ձեռքբերումները՝

- ✓ Առողջապահական ծառայություններ
- ✓ Հանրային հեռուստատեսության , ռադիոընկերության և հոգևոր-մշակութային հեռուստատեսության գործունեության ապահովում
- ✓ Էլեկտրականության բաշխում

- ✓ Գազի բաշխում և սպասարկում
- ✓ Ջրամատակարարում
- ✓ Փոստային ծառայություններ
- ✓ Դասագրքերի տպագրություն
- ✓ Հավատարմագրային կառավարման ծառայություններ (Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ, Արփա-Սևան ԲԲԸ և այլն)
- ✓ Միջազգային կառավարիչների, խորհրդատուների ծառայություններ
- ✓ Հեղինակային հսկողության ծառայություններ
- ✓ Արտակարգ դրության պայմաններում ձեռքբերումներ (COVID-19, Արցախյան պատերազմ)
- ✓ Այլ

Ի դեպ, վերոնշյալ ուղղությունների տարանջատումը որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված իրականացվել է որոշակի վերապահումներով, քանի որ որոշ դեպքերում, օրինակ դասագրքերի տպագրության և հեղինակային հսկողության ծառայություններ պարագայում, շուկայում առկա են տարբեր մատակարարներ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք պայմանավորված են հեղինակային և հարակից իրավունքներով, որոնք կանխորոշվում են մինչև գնման գործընթացի կազմակերպումը (դասագրքերի հեղինակների ընտրության և շինարարության նախագծման փուլում), այս ուղղությունները դիտարկվել են որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված գնումներ:

Բացի այդ, արտակարգ դրության, մասնավորապես հակահամաճարակային միջոցառումների և պատերազմական դրության պայմաններում ձեռքբերումները ևս դիտարկվել են որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված գնումներ՝ հաշվի առնելով հրատապության անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, հակահամաճարակային միջոցառումների պարագայում, հաշվի առնելով ներկայումս շուկայում առկա որոշակի կայունության և կանխատեսելիության հանգամանքը, կարծում ենք, որ ավելի արդյունավետ կլինի գնումների մրցակցային եղանակների կիրառության ավելացումը:

Հարկ է նշել, որ Գնումների օրենքով սահմանված բազային միավորի՝ 1մլն դրամի շեմը չգերազանցող գնումների ուսումնասիրության ընթացքում նկատվել են որոշակի ռիսկային պայմանագրեր, որոնցից է, օրինակ, Վայքի համայնքապետարանի և Ճաննախագիծ ինստիտուտ ՍՊԸ-ի միջև կնքված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման պայմանագիրը (հունիսի 9, 2020թ.), որի արժեքը կազմել է 999,999 դրամ: Նույնկերպ, մի շարք պայմանագրերի դեպքում կան ռիսկեր, որ արժեքը հարմարեցված է 1մլն դրամի շեմը չգերազանցելու և մրցակցային ընթացակարգի կիրառումից խուսափելու համար:

Այսպիսով, 2020թ. 10 ամիսների կտրվածքով այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված ոչ մրցակցային գնումների կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված ոչ մրցակցային գնումների կառուցվածքը, 2020թ. 10 ամիսներ

Այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված ոչ մրցակցային ուղղությունը	Ոչ մրց. հիմքով կատ. գնումների ծավալը, մլրդ դրամ	Ոչ մրց. հիմքով կնքված պայմ. թիվը, հատ
Առողջապահական ծառայություններ	82,5	957
Հանր. հեռուստատես., ռադիոընկեր. և հոգ.-մշակ. հեռուստատես.գործունեության ապահովում	7,4	7
COVID-19 -ի շրջ. բժշկական պարագաների և սարքավորումների ձեռքբերում	2	72
COVID-19 -ի շրջ. սննդի մատակարարման, հյուրանոցային և տրանսպորտային ծառայություններ	3,6	365
Հավատարմագրային կառավարման ծառայություններ (Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ)	3,3	1
Էլեկտրականության բաշխում	2,6	20
Փոստային ծառայություններ	1,2	51
Դասագրքերի տպագրություն	1,2	22
Ջրամատակարարում	0,7	7
Հեղինակային հսկողության ծառայություններ	0,3	27
Գազի բաշխում և սպասարկում	0,1	14
Այլ	1,9	63
Ընդհամենը նշվածը	**106,8**	**1606**
1 մլն դրամը չգերազանցող գնումներ	0,8	3822
Ընդհանուր	**107,6**	**5428**

Ըստ վերոնշյալ ուսումնասիրության արդյունքների 2020թ. 10 ամիսների կտրվածքով՝

- ▶ Այլընտրանքի բացակայության պարագայում ոչ մրցակցային եղանակով կնքվել է շուրջ 106.8 մլրդ դրամի 1606 պայմանագրեր:
- ▶ Կնքվել է 1 մլն դրամի շեմը չգերազանցող մոտ 3822 պայմանագիր՝ շուրջ 0.8 մլրդ դրամի:

- Վերոնշյալ գնումները կազմում են 2020թ. 10 ամիսների կտրվածքով կատարված գնումների (242,6 մլրդ դրամ) շուրջ 44%-ը կամ ոչ մրցակցային գնումների (117.5 մլրդ դրամ) 92%-ը:
- Հաշվի առնելով այս հաշվարկները, 2020թ. 10 ամիսների կտրվածքով **այլընտրանքի առկայության պարագայում** ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները **արժեքային արտահայտմամբ** կազմում են ընդհանուր ոչ մրցակցային գնումների շուրջ **8%**-ը կամ ընդհանուր գնումների **4%-ը**:
- Այսպիսով, համաձայն ՀՔՀԱԿ ՀԿ-ի հաշվարկների, **այլընտրանքի առկայության պարագայում** ոչ մրցակցային եղանակով 2020թ. 10 ամիսների կտրվածքով կնքվել են մոտ **322** պայմանագրեր, որի արդյունքում գեներացվել է շուրջ **10 մլրդ դրամի** պարտավորություն:

Մոնիտորինգի շրջանակներում փորձ է կատարվել խմբավորել այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային գնումները ըստ խոշորացված ենթաուղղությունների (Աղյուսակ 5):

Այլընտրանքի առկայության պարագայում 15 մլն դրամի սահմանաչափը գերազանցող ոչ մրցակցային գնումների ավելի մանրամասն նկարագիրը ներկայացված է Հավելված 1-ում:

Աղյուսակ 5. Այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային գնումները ըստ խոշորացված ենթաուղղությունների, 2020թ. 10 ամիսներ

Ոչ մրցակցային հիմքով ծախսային ենթաուղղություն	Ոչ մրցակց. հիմքով գեներացված պարտավոր. ծավալը, մլն դրամ	Ոչ մրցակց. հիմքով կնքված պայմանագրերի թիվը, հատ	Ենթախմբի ըստ պայմանագր. ծավալի խոշորագույն մատակարարները	Պայմանագր. ծավալը, մլն դրամ
Տեխնիկական հսկողության ծառայություններ, որից՝	**1345**	**4**	**Էգիս ինթերնեյշնլ ընկերության Հայաստանյան մասնաճյուղ**	**808,7**
			Կոքս Քնսալթ ԳՄԲՀ Հայաստանյան մասնաճյուղ	**527,9**
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝	*1336,6*	*3*	*Էգիս ինթերնեյշնլ ընկերության Հայաստանյան մասնաճյուղ*	*808,7*
			Կոքս Քնսալթ ԳՄԲՀ Հայաստանյան մասնաճյուղ	*527,9*
ՊԵԿ՝	*8,5*	*1*	*Շինինդուստրիա ԳՏԿ ՍՊԸ*	*8,5*
Հիմնանորոգման աշխատանքներ և Մաքսային սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքներ, որից՝	**1336**	**3**	**Մերձմոսկովյան ԲԲԸ**	**1294**
			Երկնաքեր ՍՊԸ	**39,8**
ՊԵԿ՝	*1294*	*1*	*Մերձմոսկովյան ԲԲԸ*	*1294*
Դատախազություն՝	*39,8*	*1*	*Երկնաքեր ՍՊԸ*	*39,8*
ՀԱԷԿ գնումներ	**1113**	**7**	**ООО Харьковтурбосервис**	**579,4**
			SPC ECHO+ Ltd	**477**
			ŠKODA JS a.s.	**36,6**
			Oserix SA	**14,2**

Վարժասարքերի ձեռքբերում և նորոգման ծառայություններ (ՊՆ)	**475**	**2**	**Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ**	**475**
Անշարժ գույքի և սարքավորումների վարձակալություն, որից՝	**330,7**	**23**	**Արամ Գրիգորի Ստեփանյան**	**171,8**
			Լայթ Լայֆ ՍՊԸ	**45**
			Հանարդնախագիծ ԲԲԸ	**42,8**
			Շողերինա Ստեփանի Մկրտչյան	**12**
			Հայաստանի ԴՕՍԱԱՖ համահայկական հայրենասիրական ՀԿ	**10,2**
ՊԵԿ՝	*201*	*8*	*Արամ Գրիգորի Ստեփանյան*	*171,8*
Հայաստանի հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ՝	*45*	*1*	*Լայթ Լայֆ ՍՊԸ*	*45*
Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով՝	*22*	*1*	*Հանարդնախագիծ ԲԲԸ*	*22*
ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե՝	*20,7*	*1*	*Հանարդնախագիծ ԲԲԸ*	*20,7*
Ներկայացուցչական և արարողակարգային ծառայություններ, որից՝	**354,3**	**63**	**Մառկոտել ՍՊԸ**	**110**
			Էքսպոմեդիա ՍՊԸ	**28,8**
			Էյչ Այ Ուայ	**25**
			Վինո Վինո ՍՊԸ	**16**
ՊՆ՝	*177,5*	*9*	*Մառկոտել ՍՊԸ*	*110*
			Էյչ Այ Ուայ	*25*
			Վինո Վինո ՍՊԸ	*16*
ԱԺ՝	*73,5*	*25*	Աստորիա Ինվեստ ՓԲԸ	*5*
			Հայր և որդի Երեմյաններ ՍՊԸ	*5*
			Սուրեն Աղաջանյան ՍՊԸ	*5*
			Ա/Ձ Սիլվարդ Բաղդասարյան	*5*

			Ալեքսանդր Հոթել ՍՊԸ	*5*
			Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ	*5*
			Կասկադ Ռոյալ ՍՊԸ	*5*
ԱԳՆ և ԱԳՆ ՊԱԾ՝	*54*	*11*	*Էքսպոմեդիա ՍՊԸ*	*28,8*
			Բլիզարդ ՍՊԸ	*7,8*
Վարչապետի աշխատակազմ՝	*41*	*12*	*Աութդոր Էֆեկտ ՍՊԸ*	*12,6*
			Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր ՊՈԱԿ	*6*
			ԻՄԻՋ Մ.Գ. ՍՊԸ	*5.8*
Միջոցառումների կազմակերպում, որից՝	**279,8**	**33**	**Թի Էն Սաունդ ՍՊԸ**	**74,4**
			ԱՁ Արթուր Մանուկյան	**43,4**
			Բալլերինի ՍՊԸ	**40**
			Սթեյջ Սթայլ ՍՊԸ	**19,5**
Վարչապետի աշխատակազմ՝	*181,5*	*23*	*Թի Էն Սաունդ ՍՊԸ*	*59*
			ԱՁ Արթուր Մանուկյան	*43,4*
			Սթեյջ Սթայլ ՍՊԸ	*19,5*
Վանաձորի համայնքապետարան՝	*40*	*1*	Բալլերինի ՍՊԸ	40
ՊՆ՝	*58,3*	*9*	*Թի Էն Սաունդ ՍՊԸ*	15,3
			Հեփի Իվենթ ՍՊԸ	4,5
			Հոլիդեյ Դիզայն ՍՊԸ	*4,3*
Պատվաստանյութերի /դաբաղ/ ձեռքբերում (Էկոնոմիկայի նախարարություն)	**222,4**	**1**	**Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն**	**222,4**
Ծրագրային ապահովման մշակման և սպասարկման ծառայություններ, որից՝	**184**	**10**	**Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ**	**50,4**
			ՖՎ&Գ ՍՊԸ	**44**
			ՍՈՖԹ ՊՐՈՖ ՍՊԸ	**37,2**

			Եր. մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտ. ինստիտուտ ՓԲԸ	**15,8**
			Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս ՍՊԸ	**15,4**
Ոստիկանություն՝	*98,2*	*4*	*ՖՎ&Գ ՍՊԸ*	*44*
			ՍՈՖԹ ՊՐՈՖ ՍՊԸ	*37,2*
			Եր. մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտ. ինստիտուտ ՓԲԸ	*15,8*
ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայություն՝	*55,4*	*2*	*Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ*	*50,4*
Դատական դեպարտամենտ	*15,4*	*1*	*Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս ՍՊԸ*	*15,4*
Ապահովագրություն, որից՝	**206**	**22**	**Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ**	**94**
			Ինգո Արմենիա ՓԲԸ	**77,4**
ՊՆ՝	*93,3*	*7*	*Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ*	*70,7*
			Նաիրի Ինշուրանս ԱՍՊԸ	*12,2*
			Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ	*10,4*
Ոստիկանություն՝	*64,5*	*6*	*Ինգո Արմենիա ՓԲԸ*	*58,6*
			Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ	*3,7*

Բողոքարկման համակարգի մոնիտորինգ

Համաձայն պետգնումների պաշտոնական կայքի Բողոքարկման բաժնում ներկայացված տվյալների[2], 2020թ. 11 ամիսների ընթացքում բողոքները քննող անձանց կողմից ընդունվել է շուրջ 878 որոշում, որից 305-ը հանդիսացել են միջանկյալ որոշումներ[3], 8-ի դեպքում կայացվել է առանց քննության թողնելու կամ ընթացակարգի քննությունը կասեցնելու որոշում (մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կամ փորձաքննություն անցկացնելու համար), իսկ մնացած 565-ի մասով կայացվել է մերժման, բավարարման կամ մասնակի բավարարման որոշում[4]: 2019 և 2020թթ. 11 ամիսների ընթացքում կայացված որոշումների կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Բողոքները քննող անձանց կողմից ընդունված որոշումները, 2019 և 2020թթ. 11 ամիսներ



[2] http://gnumner.am/hy/page/boghoqneri_veraberyal_kayacats_oroshumner/
[3] Միջանկյալ որոշումների շրջանակներում հիմնականում ընդունվել են բողոքի քննությունը 10 օրացույցային օրով երկարաձգելու որոշումներ:
[4] Վերլուծությունը իրականացվել է 2020թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ կայքում հրապարակված տվյալների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, 2020թ. 11 ամիսների ընթացքում ընդունվել է մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակում) ներառելու վերաբերյալ 414 որոշում, ինչը մի փոքր զիջում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու մասով ընդունված որոշումները, 2019 և 2020թթ. 11 ամիսներ

	2019թ. 11 ամիս		**2020թ. 11 ամիս**	
	Որոշումների քանակը, հատ	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**	**Որոշումների քանակը, հատ**	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**
Բավարարվել է ցուցակում ներառումը	249	59	180	43
Մերժվել է ցուցակում ներառումը	174	41	234	57
Ընդամենը	**423**	**100**	**414**	**100**

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակի տվյալներից, դիտարկվող երկու ժամանակաշրջանում մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու վերաբերյալ ընդունված որոշումների առումով նկատվել են հակառակ միտումներ. 2020թ. 11 ամիսների ընթացքում ընդունվել են մեծամասամբ Սև ցուցակում ներառումը մերժող որոշումներ, մինչդեռ նախորդ ժամանակաշրջանում այսպիսի ընթացակարգերը մեծամասամբ բավարարվել են:

Վերոնշյալ որոշումների ուսումասիրությունը վկայում է, որ բողոքները քննող անձանց կայացրած որոշումների մասով ևս առկա են հակառակ միտումներ, մասնավորապես, բողոքները քննող անձ Գրիգոր Ներսիսյանը մեծամասամբ ընդունել է մասնակիցներին Սև ցուցակում ներառումը մերժելու որոշումներ (66%), մինչդեռ մյուս քննող անձ՝ Լևոն Օհանյանը ավելի շատ բավարարել է Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը (53%) (Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Բողոքները քննող անձանց կողմից մասնակիցներին Սև ցուցակում ներառելու մասով կայացրած որոշումների վերլուծությունը, 2020թ. 11 ամիսներ



2020թ. 11 ամիսների կտրվածքով գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերի հիմնական պատճառների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 7-ում և Գծապատկեր 7-ում:

Աղյուսակ 7. Գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերի հիմնական պատճառները, 2020թ. 11 ամիսներ

Բողոքի հիմքը	Քննված բողոքների քանակը
Հրավերով սահմանված փաստաթղթերի հետ կապված (անհամապատասխանությունների շտկում)	157
Պայմանագրի կնքումից կամ ընթ. մասն. հրաժարման, ապահովումներ չներկ. հետ կապված	144
Պայմանագրային պարտավորությունների խախտման հետ կապված	96
Այլ	17
Ընդամենը	**414**

Գծապատկեր 7. Գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերի հիմնական պատճառների կառուցվածքը, 2020թ. 11 ամիսներ



Ընդհանուր առմամբ, վերոնշյալ հիմքերով մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու մասով ընդունված որոշումների վերլուծությունը վկայում է, որ բոլոր հիմքերի գծով մեծամասամբ ընդունվել են ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը մերժելու որոշումներ (Գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Գնումների Սև ցուցակում ներառելու վերաբերյալ ընդունված որոշումների վերլուծությունը, 2020թ. 11 ամիսներ



Հատկապես ուշագրավ է, որ, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների, դիտարկվող ժամանակահատվածում առավել մեծ ուշադրությունն է դարձվել պատվիրատուների կողմից գնումների օրենսդրական կարգավորումներով սահմանված ընթացակարգերի պատշաճ պահպանմանը: Այսպիսով, ուսումնասիրության ընթացքում հաճախ են հանդիպել դեպքեր, երբ պատվիրատուների կողմից թույլ են տրվել թերացումներ (հազվադեպ նաև լիազոր մարմնի կողմից), մասնավորապես չեն պահպանվել Կառավարության 2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետով սահմանված պարտադիր դրույթները, ըստ որոնց՝

> *Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:*

Բացի այդ, բավական հաճախ են հանդիպել դեպքեր, երբ պատվիրատուները խախտել են վերոնշյալ կարգի 16 և 17-րդ կետերը: Եվ չնայած մասնակիցների կողմից թույլ տրված խախտումների, Սև ցուցակում ներառելու տվյալ ընթացակարգերը մերժվել են, քանի որ ի սկզբանե համապատասխան գնման ընթացակարգերը կազմակերպվել են առանց իրավական հիմքի, այսինքն առանց գնումների պլանում գնման առարկայի առկայության կամ տեղեկագրում չհրապարակված լինելու պարագայում.

> *16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:*
> *17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:*

Որոշ դեպքերում էլ պատվիրատուների կողմից խախտվել են կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, այսինքն մասնակիցներին Սև ցուցակում ներառելու ընթացակարգը նախաձեռնվել է մինչև պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելը (կամ նույն օրը), ինչը ենթադրում է, որ մասնակիցները պատշաճ ծանուցված չեն եղել.

> *33. Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝*
> *17) պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ*

ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, չնայած մասնակիցների կողմից թույլ տրված խախտումների, բոլոր վերոնշյալ դեպքերում բողոքները քննող անձինք ընդունել են որոշումներ ի օգուտ մասնակիցների, այն է՝ մերժել են սև ցուցակում ներառելու այդ ընթացակարգերը:

Համաձայն պետգնումների կայքի Բողոքարկման բաժնում ներկայացված տվյալների, պատվիրատուների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացված բողոքների մասով 2020թ. 11 ամիսների ընթացքում ընդունվել է 151 որոշում, ինչը բավական զիջում է նախորդ տարվա ցուցանիշը:

Ի տարբերություն Սև ցուցակում ներառելու վերաբերյալ ընդունված որոշումների, պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով ընդունված որոշումների առումով դիտարկվող երկու ժամանակաշրջանում նկատվել են նույնական միտումներ. և՛ 2019թ., և 2020թ. 11 ամիսների ընթացքում այսպիսի բողոքները մեծամասամբ բավարարվել են (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով ընդունված որոշումները, 2019 և 2020թթ. 11 ամիսներ

	2019թ. 11 ամիս		**2020թ. 11 ամիս**	
	Որոշումների քանակը, հատ	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**	**Որոշումների քանակը, հատ**	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**
Բավարարվել է (նաև մասնակի)	113	56	80	53
Մերժվել է	90	44	71	47
Ընդամենը	**203**	**100**	**151**	**100**

Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով 2020թ. 11 ամիսների ընթացքում բողոքները քննող անձանց կայացրած որոշումների վերլուծության արդյունքները ներկայացված են Գծապատկեր 9-ում:

Գծապատկեր 9. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով բողոքները քննող անձանց կայացրած որոշումների վերլուծությունը, 2020թ. 11 ամիսներ



2020թ. 11 ամիսների կտրվածքով պատվիրատուների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 9-ում և Գծապատկեր 10-ում:

Աղյուսակ 9. Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառները, 2020թ. 11 ամիսներ

Բողոքի հիմքը	Քննված բողոքների քանակը
Հրավերով սահմանված փաստաթղթերի և հայտերի գնահատման հետ կապված	62
Հրավերում թերությունների և խտրական մոտեցումների առկայության վերաբերյալ	35
Գնումների պլանի հրապարակման հետ կապված	18
Այլ	36
Ընդամենը	151

Գծապատկեր 10. Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառների կառուցվածքը, 2020թ. 11 ամիսներ



Ընդհանուր առմամբ, պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով ընդունված որոշումների վերլուծությունը վկայում է, որ տարբեր հիմքերով բողոքները հիմնականում լիովին կամ մասնակի բավարարվել են:

Հատկապես ուշագրավ է, որ հրավերում թերությունների և խտրական մոտեցումների առկայության վերաբերյալ ներկայացված բողոքների մասով մեծամասամբ ընդունվել են բավարարման որոշումներ (շուրջ 66%), ինչի արդյունքում պատվիրատուների գնահատող հանձնաժողովները պարտավորվել են տվյալ ընթացակարգերը չկայացած հայտարարել (Գծապատկեր 11):

Ինչպես Սև ցուցակում ներառելու վերաբերյալ ընդունված որոշումների, այնպես էլ պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով ընդունված որոշումների առումով ևս հաճախ են հանդիպել դեպքեր, երբ պատվիրատուների կողմից թույլ են տրվել թերացումներ, մասնավորապես չեն պահպանվել Գնումների գործընթացի կազմակերպման կարգով սահմանված դրույթները և հատկապես կարգի 16 և 17-րդ կետերը, այն է՝ գնման ընթացակարգերը կազմակերպվել են առանց գնումների պլանում գնման առարկայի առկայության կամ տեղեկագրում չհրապարակված լինելու (կամ գնման ընթացակարգի/մրցույթի հայտարարման նույն օրը հրապարակվելու) պարագայում, ինչը ենթադրում է, որ դրանք պետք է հայտարարվեն չկայացած:

Գծապատկեր 11. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով ընդունված որոշումների վերլուծությունը, 2020թ. 11 ամիսներ



Աղյուսակ 10-ում և 11-ում ներկայացված է այն պատվիրատուների ցանկը, ում գործողությունների դեմ առավել հաճախակի են բողոք ներկայացրել մասնակիցները:

Աղյուսակ 10. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2020թ. 11 ամիսներ

	Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են	Բավ.	Մերժ.	Ընդամենը
1	ՊՆ	6	5	11
2	Նորք-Մարաշ ԲԿ ՓԲԸ	6	4	10
3	Երևանի քաղաքապետարան	5	4	9
4	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	4	3	7
5	Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ	4	3	7
6	Քաղաքաշինության կոմիտե	4	2	6
7	Ոստիկանություն	5	0	5
8	ՀԱԷԿ ՓԲԸ	3	2	5
9	ՊԵԿ	2	3	5

10	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	1	3	4
	Ընդամենը նշվածը	**40**	**29**	**69**
	Ընդամենը 11 ամիսներ	80	71	151
	Մասնաբաժինը ընդհանուրում, %	**50**	**41**	**46**

Աղյուսակ 11. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2019թ. 11 ամիսներ

	Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են	**Բավ.**	**Մերժ.**	**Ընդամենը**
1	ՊՆ	13	22	35
2	Երևանի քաղաքապետարան	13	12	25
3	ՀԱԷԿ ՓԲԸ	5	6	11
4	Եր. Մխ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան հիմնադրամ	4	4	8
5	Ոստիկանություն	2	5	7
6	Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն	5	1	6
7	Սբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ	5	0	5
8	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	3	2	5
9	Քաղաքաշինության կոմիտե	4	1	5
10	ՊԵԿ	4	0	4
	Ընդամենը նշվածը	**58**	**53**	**111**
	Ընդամենը 11 ամիսներ	113	90	203
	Մասնաբաժինը ընդհանուրում, %	**51**	**59**	**55**

Ընդհանուր առմամբ, 2019 և 2020թթ. 11 ամիսների ընթացքում 10 պատվիրատուների դեմ ներկայացված բողոքները կազմել են տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր բողոքների համապատասխանաբար՝ 55 և 46%-ը:

Վերոնշյալ աղյուսակներում բերված տվյալներից երևում է, որ այս պատվիրատուների ցանկը էական փոփոխությունների չի ենթարկվել, սակայն երկու ժամանակաշրջանների ցանկերում ընդգրկված պատվիրատուների դեմ

ներկայացված բողոքների թիվը հիմնականում նվազել է (բացի ՊԵԿ-ից և Քաղաքաշինության կոմիտեից):

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Այլընտրանքի առկայության պարագայում 15 մլն դրամի սահմանաչափը գերազանցող ոչ մրցակցային գնումների նկարագիրը, 2020թ. 10 ամիսներ

Պատվիրատուի անվանումը	Ընտրված մասնակից	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման ընթաց.	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
Պետական եկամուտների կոմիտե	Մերձմոսկովյան ԲԲԸ	2020-06-04	Հրատապ մեկ անձ	Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում տեղակայված ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման (2-րդ փուլ 2-րդ մաս) աշխատանքներ	1 294 025 700
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Էգիս ինթերնեյշնլ ընկերության հայաստանյան մասնաճյուղ	2020-07-03	Մեկ անձ	Տեխնիկական հսկողության ծառայություններ	808 718 880
Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ	ООО Харьковтурбосервис	2020-09-16	Մեկ անձ	Արտարկիչներ	579 400 720
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Կոքս Քնսալթ ԳՄԲՀ Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանում	2020-07-15	Մեկ անձ	Տեխնիկական հսկողության ծառայություններ	509 503 106
Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ	SPC ECHO+ Ltd	2020-06-22	Մեկ անձ	ՀԱԷԿ ՓԲԸ գլխավոր շրջանառու խողովակաշարի (ԳՇԽ 1-6, Ду500, 2ԳՓՍ) եռակցված կարերի ավտոմատ ուլտրաձայնային ստուգում	476 997 751
Պաշտպանության նախարարություն	Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ	2020-04-16	Մեկ անձ	համալիր վարժասարք	430 000 000
Էկոնոմիկայի նախարարություն	Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն	2020-07-22	Հրատապ մեկ անձ	Պատվաստանյութերի մատակարարում/դաբաղ	222 371 250

Պետական եկամուտների կոմիտե	Արամ Գրիգորի Ստեփանյան	2020-06-05	Մեկ անձ	Տարածքի վարձակալություն	171 819 530
Պաշտպանության նախարարություն	Մարկոտել ՍՊԸ	2020-02-25	Մեկ անձ	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	110 000 000
Պաշտպանության նախարարություն	ԱՐՄ-ԱԷՐՈ ՓԲԸ	2020-05-04	Մեկ անձ	Տեղափոխման ծառայություններ	100 000 000
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Արմենպրես Պետական լրատվական գործակալություն ՓԲԸ	2020-02-21	Մեկ անձ	Էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ	98 187 400
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Արմենպրես Պետական լրատվական գործակալություն ՓԲԸ	2020-03-06	Մեկ անձ	Տպագրման և բաշխման ծառայություններ	84 069 500
Պաշտպանության նախարարություն	Ռադար-Ավիա ՓԲԸ	2020-05-21	Մեկ անձ	Կայանների վերանորոգում և տեխնիկական սպասարկում	69 045 998
Պաշտպանության նախարարություն	Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ	2020-04-07	Մեկ անձ	Պատահարներից ապահովագրման ծառայություններ (Դժբախտ պատահարներից ապահովագրության ծառայություններ)	66 396 230
Ոստիկանություն	ԷԿԵՆԳ ՓԲԸ	2020-03-02	Մեկ անձ	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	65 000 000
Ոստիկանություն	Տոյոտա Երևան ՍՊԸ	2020-03-03	Մեկ անձ	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	63 000 000
Վարչապետի աշխատակազմ	Թի Էն Սաունդ ՍՊԸ	2020-09-16	Մեկ անձ	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	59 064 800
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն	Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ	2020-01-30	Մեկ անձ	Ծրագրային ապահովման կիրարկման ծառայություններ	50 400 000
Պաշտպանության նախարարություն	ԷԼ ՋԻ ՄԵԴԻԱ ՍՊԸ	2020-03-10	Մեկ անձ	ՈՒսումնասիրությունների իրականացման ծառայություններ	50 000 000
Հայաստանի հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ	Լայթ Լայֆ ՍՊԸ	2020-02-17	Հրատապ մեկ անձ	Հեռուստատեսային արտադրանքի նկարահանումների համար անհրաժեշտ տեխնիկայի վարձակալության ծառայություններ	45 000 000
Պաշտպանության նախարարություն	Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ	2020-04-06	Մեկ անձ	Համալիր վարժասարքերի նորոգում (Տ-72 տանկի և ՀՄՄ-2 համալիր վարժասարքերի նորոգում)	45 000 000

Էկոնոմիկայի նախարարություն	Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ	2020-02-20	Մեկ անձ	Մասնագիտական ծառայություններ	45 000 000
Ոստիկանություն	ՖՎ&Գ ՍՊԸ	2020-02-26	Մեկ անձ	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	44 000 000
Վարչապետի աշխատակազմ	ԱՁ Արթուր Մանուկյան	2020-09-16	Մեկ անձ	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	43 422 225
Վանաձորի համայնքապետարան	Բալլերինի ՍՊԸ	2020-01-15	Մեկ անձ	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	40 000 000
Դատախազություն	Երկնաքեր ՍՊԸ	2020-10-29	Հրատապ մեկ անձ	ՀՀ դատախազության մասնաշենքի հիմնանորոգում	39 780 360
Ոստիկանություն	Սոֆթ Պրոֆ ՍՊԸ	2020-02-06	Մեկ անձ	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	37 200 000
Արդարադատության նախարարություն	Պաշտոնական տեղեկագիր ՓԲԸ	2020-01-17	Մեկ անձ	Էլ. շտեմարանի սպասարկում	36 895 900
Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ	ŠKODA JS a.s.	2020-07-09	Մեկ անձ	2ԳԾՊ-1-6 փաթաթանի խողովակաշարի պոմպային ագրեգատների վերաուղեգծման նախագծի իրականացում՝ խողովակային բլոկների պատրաստման աշխատանքային գծագրերի մշակմամբ	36 587 780
Ոստիկանություն	Ինգոարմենիա ԱՓԲԸ	2020-03-30	Մեկ անձ	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	31 983 300
Արմավիրի մարզպետարան	Հիգիեն անդ Պերսոնալ կեյր ՍՊԸ	2020-10-30	Հրատապ մեկ անձ	Հականեխիչ (անտիսեպտիկ) հեղուկներ	31 526 992
Արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայություն	Էքսպոմեդիա ՍՊԸ	2020-10-20	Մեկ անձ	Ներկայացուցչական ծախսեր	28 829 590
Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ	2020-05-27	Մեկ անձ	Հանդերձանք և անկողնային պարագաներ	27 030 000
Ոստիկանություն	Լոկատոր ՓԲԸ	2020-02-06	Մեկ անձ	Գլոբալ ցանցի մատուցման ծառայություններ	26 596 721
Ոստիկանություն	Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ ՍՊԸ	2020-04-20	Մեկ անձ	Սննդամթերք	25 840 000
Գեղարքունիքի մարզպետարան	Անտիբակ	2020-10-29	Հրատապ մեկ անձ	Հականեխիչ հեղուկ	25 328 930

Պաշտպանության նախարարություն	Էյչ Այ Ուայ ՍՊԸ	2020-02-25	Մեկ անձ	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	25 000 000
Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	Հանարդնախագիծ ԲԲԸ	2020-07-07	Մեկ անձ	Ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալություն	22 050 000
Պաշտպանության նախարարություն	ԵՐՄՄԳՀԻ ՓԲԸ	2020-04-23	Մեկ անձ	Էլեկտրոնային վարժասարքերի նորոգման ծառայություններ	22 000 000
Ոստիկանություն	ՖՎ&Գ ՍՊԸ	2020-03-17	Մեկ անձ	Ներքին ծառայողական /ինտրանետ/ ցանց	22 000 000
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	Հանարդնախագիծ ԲԲԸ	2020-02-03	Մեկ անձ	Ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության ծառայություն	20 722 800
Պետական պահպանության ծառայություն	Ավանգարդ Մոթորս ՍՊԸ	2020-01-22	Մեկ անձ	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն	20 000 000
Վարչապետի աշխատակազմ	ՍԹԵՅՋ ՍԹԱՅԼ ՍՊԸ	2020-09-16	Մեկ անձ	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	19 530 060
Վարչապետի աշխատակազմ	ՎԵՈՆ Արմենիա ՓԲԸ	2020-02-04	Մեկ անձ	Հանրային հեռախոսային ծառայություններ	19 000 000
Ազգային անվտանգության ծառայություն	ԻՆԳՈԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ	2020-02-20	Մեկ անձ	Շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայություններ	18 836 000
Ոստիկանություն	Բայազետ 1	2020-04-20	Մեկ անձ	Սննդամթերք	18 572 900
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Կոքս Քնսալթ ԳՄԲՀ Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանում	2020-07-15	Մեկ անձ	Տեխնիկական հսկողության ծառայություններ	18 365 559
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	ԱՁ Գրիգորև Վլադիմիր Վիտալևիչ	2020-07-24	Հրատապ մեկ անձ	Վարչական սարքավորումներ	18 360 000
Պաշտպանության նախարարություն	Ցեպելին Արմենիա ՍՊԸ	2020-03-12	Մեկ անձ	Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային պասարկման ծառայություններ	18 052 000
Պաշտպանության նախարարություն	Ֆոր Դիրեքշնս Մոթորս ՓԲԸ	2020-03-03	Մեկ անձ	Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկում	18 000 000

Ոստիկանություն	Ալիկանտե ՍՊԸ	2020-03-02	Մեկ անձ	Ավտոմոբիլների վրա տեղադրված էլեկտրասարքավորումների վերանորոգման ծառայություններ	18 000 000
Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ	Սոլիդ Փարթներ ՍՊԸ	2020-05-26	Մեկ անձ	Ֆիլմեր ըստ պահանջի տեսակի հեռուստատեսության ծառայություն	17 625 000
Դատախազություն	ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ	2020-02-11	Մեկ անձ	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	17 066 100
Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ	2020-01-24	Մեկ անձ	Հաց, 1-ին տեսակի	16 500 000
Պաշտպանության նախարարություն	Վինո Վինո ՍՊԸ	2020-02-25	Մեկ անձ	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	16 050 000
Ոստիկանություն	Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ	2020-02-12	Մեկ անձ	Ծրագրային ապահովման մշակման ծառայություններ	15 815 000
Հայաստանի հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ	Յուքոմ ՍՊԸ	2020-01-08	Մեկ անձ	Ինտերնետային և այլ առցանց ծառայությունների վճարներ	15 510 000
Դատական դեպարտամենտ	Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս ՍՊԸ	2020-05-26	Մեկ անձ	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	15 440 000
Պաշտպանության նախարարություն	Թի Էն Սաունդ ՍՊԸ	2020-06-05	Մեկ անձ	մայիսի 9-ին նվիրված միջոցառումների ծառայություններ	15 317 400